

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՀԱՐՅԻ ՇՈՒՐՁ**

Շուկայական հարաբերություններին անցում կատարած նորանկախ երկրներում սոցիալ-տնտեսական ճգնաժամի հաղթահարման գործում էական դեր ունեցավ ազգային տնտեսությունների առանձնահատկություններին համապատասխան արևմտյան երկրների առաջավոր փորձի կիրառումը: Նախևառաջ հարկ եղավ արմատական վերակառուցում իրականացնել բանկային համակարգում: Պետք է փաստել, որ մասնավորապես ՀՀ բանկային համակարգում իրականացված բարեփոխումները դրսևորեցին առաջանցիկ տեմպ, ինչով էլ պայմանավորվեց 2008թ. տարեվերջին տեղի ունեցած համաշխարհային ֆինանսական ճգնաժամին դիմակայելու բավարար ներուժի առկայությունը: Սակայն, նույն հաջողությունները չենք կարող լիարժեք ձևով վերագրել փոքր և միջին բիզնեսի ոլորտին: Նոր զարգացող տնտեսություններում անչափ կարևոր է վերջինիս փոքր և միջին բիզնեսով ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների դերը, որոնք պարբերաբար ունենում են դրամական միջոցների նկատմամբ լրացուցիչ պահանջ: Դրանց բավարարման աղբյուր են ծառայում բանկային վարկը և արևմտյան երկրներում լայն կիրառում ստացած պետական օժանդակության մեխանիզմները:

Առևտրային բանկերի գործունեության ընթացքում հանգուցային են համարվում վարկավորման գործառնությունները, որոնց արդյունքում էլ ձևավորվում է բանկի եկամուտների գերակշիռ մասը: Ուստի, վարկավորման գործառնությունների իրականացման դեպքում առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներից մեկը հանգում է հավանական փոխառուի ճիշտ ընտրությանը, վարկավորման դեպքում առաջացող ռիսկի կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացմանը:

Վարկային ռիսկը արդյունավետ վերահսկելու համար անհրաժեշտ է իմանալ ոչ միայն վարկային պորտֆելի սպասվող վնասի միջին գնահատականը, այլ նաև որոշել միջին նշանակությամբ համեմատ վտահեղիության նշանակության միջակայքը, քանի որ պորտֆելի կորուստների իրական մակարդակը կարող է բավականին ուժեղ տատանվել միջին նշանակության համեմատ: Հաշվի առնելով վարկի բնույթը՝ անհրաժեշտ է տարբերել դրա այնպիսի առանձնահատկությունը, ինչպես օրինակ վարկի միավորի հաշվառման իրողությունն է: Բանկը նախընտրելի է համարում գերծ մնալ խոշոր վարկառուների մոտ վարկերի կենտրոնացումից:

Մեր կարծիքով վարկային գործառնությունը անհատական ապրանք է, և որքան փոքր է հաշվառման միավորը, այնքան բարձր է դրա իրագործման դեպքում հավանական սխալի գինը: Նշվածը բացատրվում է ոչ միայն վարկի բնությամբ, այլև այն իրողությամբ, որ վարկային գործառնությունները կարևոր տեղ են գրավում առևտրային բանկերի հաշվեկշռում:

Բացկայնապես չենք կարող անտեսել այն փաստը, որ նորանկախ երկրներում այնուամենայնիվ վարկային գործառնությունները շարունակում են մնալ ռիսկային, ուստի, վարկային ռիսկի կառավարումը պահանջում է նոր ժամանակակից տեխնոլոգիաների կիրառում: Ըստ ամերիկյան վերլուծաբանների՝ ժամկետանց վարկերի 35-40%-ը առաջանում է դեռևս բանակցությունների նախնական փուլում փոխառուի ֆինանսական վիճակի մակերեսային վերլուծության արդյունքում¹:

¹ St'u Крейнина М.Н. Финансовое состояние предприятия. Методы оценки - М:ИКЦ "Дис", 1997, 224 էջ:

Առևտրային բանկի վարկային քաղաքականությունը միջոցների ներգրավման ու վարկավորման սկզբունքների հիման վրա փոխառություններին վարկերի տեսքով տրամադրման ռազմավարությունն ու մարտավարությունն է, որոնց թվին է դասվում մասնավորապես աստիճանավորումը:

Վարկի աստիճանավորումն այնպիսի քաղաքականություն է, որի ներքո բանկը հավանական փոխառությունների տարբեր խմբերին ցուցաբերում է տարբերակված մոտեցում: Վարկատու բանկը փոխառու կազմակերպությանը ժամկետայնության, վերադարձելիության և վճարելիության պայմաններով տրամադրում է վարկեր, բայց այդ դեպքում մնում է տրամադրվող միջոցների սեփականատեր, որոնց ճակատագիրը չի կարող բանկին չհետաքրքրել: Բանկի վարկային գործունեությունը ցանկացած դեպքում իրականացվում է իր եկամուտների շահերին համապատասխան: Յուրաքանչյուր վարկային գործարքի դեպքում վարկատուի համար առկա է ռիսկի գործոնը, այսինքն՝ մշտապես գոյություն ունի փոխառուի կողմից տարբեր պատճառներով վարկը չվերադարձնելու, պարտքային պարտավորությունների մարման ժամկետների խախտման հավանականություն:

Վարկային ռիսկը, ինչպես նշել ենք, համարվում է առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների համար ամենամշակակալին, իսկ այդ ռիսկի կառավարումը՝ բանկային մենեջմենթի առաջնահերթ լուծման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է հետևողական մոտեցում ցուցաբերել վարկային գործառնության իրականացման յուրաքանչյուր փուլին: Օրինակ՝ առևտրային կազմակերպությունների վարկունակության գնահատման գործընթացում անմիջական կրկնությամբ մույն մոտեցումների կիրառումը չի կարող արդյունավետ արդյունքներ ապահովել փոքր, միջին և խոշոր կազմակերպությունների առումով:

Վարկային ռիսկի առկայությունը կախված է մի շարք գործոններից՝ արտաքին և ներքին, նախևառաջ փոխառու կազմակերպության գործունեության արդյունքներից ու պայմաններից, ինչը պայմանավորում է բանկի կողմից հատուկ չափանիշների ընտրություն, որոնցով հնարավոր կլինի որոշել հավանական փոխառուի հուսալիության աստիճանը, վարկունակությունը:

Կազմակերպության ֆինանսական վիճակի և նրա վարկունակության վրա ազդող արտաքին գործոններից կարևորվում են քաղաքականը և տնտեսականը¹: Սակայն պետք է նշենք, որ առևտրային բանկերը մեծամասամբ վարկունակության գնահատման մոտեցումներ մշակելիս շեշտադրումը կատարում են ներքին գործոնների վրա: Բայցևայնպես, նման մոտեցումը չի կարող արդյունավետ համարվել արտահանման մեծ ծավալներ ունեցող կազմակերպությունների առումով: Պետք է նկատել, որ համաշխարհային ֆինանսական ճգնաժամը կազմակերպությունների վարկունակության վրա ազդող արտաքին գործոնների ազդեցությունը, մասնավորապես խոշոր կազմակերպությունների համար, առավել քան ակնհայտ է: Դրա հետ կապված փաստենք, որ օրինակ, ՀՀ հանքարդյունահանող արդյունաբերական կազմակերպությունները միջազգային շուկայում գնանկման հետևանքով կրում են լուրջ ֆինանսական կորուստներ, ինչն իր հերթին անբարենպաստ ձևով է անդրադառնում վարկունակության վրա: Ֆինանսական դժվարությունների առաջ են կանգնել ինչպես Ալավերդու, այնպես էլ Քաջարանի պղնձամոլիբդենային հայրենական հսկաները, կրճատել է արտադրական ծավալները ևս մեկ խոշոր հայրենական արտադրական հսկա՝ «Նաիրիտ-1» ՓԲԸ-ն: Նշանակալի ֆինանսական կորուստներ են կրում նաև հանրապետության գինու և կոնյակի արտադրության խոշոր ու միջին կազմակերպությունները: Նման միտումը տևական բնույթ կրելու դեպքում կարող է վերաճել համակարգային ճգնաժամի, ինչի արդյունքում հանրապետության առևտրային կազմակերպությունների զգալի մասի վարկունակությունը կնվազի: Միաժամանակ, հանրապետության առևտրային բանկերի գործունեությունը վարկավորման գործընթացում այսուհետ պետք է նպատակաուղղված լինի ոչ միայն վարկունակության գնահատմանը, այլև դրա բարձրացմանն ուղղված բավարար խորհրդատվության մատուցմանը:

¹ Стів Станиславчик Е.Н. Риск-менеджмент на предприятии. Теория и практика. - М.: Ось-89, 2002, էջ 35, 36:

Անհրաժեշտ է նշել նաև, որ վարկունակությունը հասկացությունը մասնագիտական գրականության մեջ համարվում է վիճահարույց:

Փոխառուի վարկունակությունը՝ ի տարբերություն նրա վճարունակության, անցած փուլում կամ կոնկրետ պահի դրությամբ չի ֆիքսում չվճարումները, այլ կանխատեսում է հեռանկարում պարտքի մարման կարողությունը: Նախորդ փուլում անվճարունակության մակարդակի որոշումը համարվում է այն ցուցանիշներից մեկը, որի վրա հիմնվում են հաճախորդի վարկունակությունը գնահատելիս: Եթե փոխառուն ունեցել է ժամկետանց պարտավորություն, բայց նրա հաշվեկշիռը իրացվելի է, ինչպես նաև բավարար է սեփական կապիտալի մեծությունը, ապա բանկի կողմից հաճախորդի մասնակի չվճարումը չպետք է հիմք հանդիսանա նրան վարկունակ չհամարելու համար: Գործնական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վարկունակ կազմակերպությունները երկար ժամկետով թույլ չեն տալիս չվճարումներ, բանկի պարտավորություններ ամբողջությամբ կատարելու հարցում աչքի են ընկնում իրենց պատրաստականությունը:

Ըստ Ն.Խ.Բունցեի տեսակետի՝ տնտեսավարողի վարկունակությունը պայմանավորված է անշարժ գույքում ներդրված կապիտալի անշարժունակությամբ, քանի որ անշարժ գույքը համարվում է վարկի վերադարձման առավել նախընտրելի երաշխիքը¹: Սակայն, տնտեսագետներ մեծ մասը վարկը տրամադրելիս կարևորել է փոխառուի՝ եկամուտներ սինթեզելու կարողությունը: Այսպես, Ի.Ե.Արադուրովը տնտեսավարող սուբյեկտների վարկավորման հնարավորությունը կապել է արտադրատնտեսական գործընթացում ավանսավորված կապիտալը վերականգնելու կարողությամբ²:

Ժամանակակից տնտեսագետները տարբեր կերպ են բնորոշել վարկունակությունը հասկացությունը: Մասնավորապես, Մ.Օ.Սախարովան վարկունակությունը հասկացության տակ նկատի է ունեցել կազմակերպության այնպիսի ֆինանսատնտեսական վիճակը, որը վստահություն է տալիս փոխառու միջոցները օգտագործելիս, ինչպես նաև համարել է ըստ վարկային պայմանագրի պայմանների վարկը վերադարձնելու փոխառուի կարողություն և պատրաստականությունը³:

Մեկ այլ տեսակետի համաձայն, որը ներկայացրել են Վ.Յանիշևսկայան, Վ. Սկրուկը և Տ. Լուկաչերը, կազմակերպության վարկունակությունը բանկի կողմից փոխառուի գնահատումն է նրան վարկ տրամադրելու նպատակահարմարության տեսանկյունից և համապատասխան կնքվող պայմանագրի վարկը ժամանակին վերադարձնելու հավանականության որոշումը⁴:

Պրոֆեսոր Վ.Յամպոլսկին նշել է, որ վճարունակությունը հասկացությունը ներառում է իրավաբանական անձի կարողությունը և հնարավորությունը ժամանակին մարելու բոլոր պարտավորությունները, իսկ վարկունակությունը բնութագրում է միայն վարկային պարտավորությունը մարելու հնարավորությունը⁵:

Այս տեսակետի համաձայն՝ վարկունակությունը դիտվում է որպես վճարունակության բաղկացուցիչ մաս: Սակայն, ինչպես նշվում է «Բանկային վերահսկողության Բազելյան կոմիտեի և առաջնորդական գործունեության միջազգային կոմիտեի երաշխավորություններում»⁶, վարկունակության բնութագրությունը պետք է լինի վճարունակության համեմատ այլ, քանի որ վարկի

¹ St'u Бартон Т.Л. Комплексный подход к риск-менеджменту: стоит ли этим заниматься. — М.: Вильямс, 2003, էջ 351-353:

² St'u Адауров И.Е. Основы кредитоспособности, способы ее определения и проверки. - СПб. Коммерческая литература - 1914, էջեր 56-69:

³ St'u Чечета А.П. Анализ финансового состояния предприятий // Бухгалтерский учет - 1992. - №5, էջեր 10-12:

⁴ St'u Янишевская В.М., Севрук В.Т., Лукачер Т.Г. Банк анализирует кредитоспособность // Деньги и кредит - 1990. - №55, էջեր 35-37:

⁵ St'u Деньги, кредит, банки / О.И. Лаврушин, М.М. Ямпольский, Ю.П. Савинский и др.; под ред. О.И. Лаврушина. - М.: Финансы и статистика - 1998, 5, էջեր 270-294:

⁶ St'u Рекомендации Международного комитета по аудиторской деятельности и Базельского комитета по банковскому надзору "Отношение между органами надзора за банками и внешними аудиторами". // Вестник Банка России - 2000. - № 63-64.

մարումը հնարավոր է նաև այլ բանկի կամ կազմակերպության երաշխիքի օգտագործման շնորհիվ կամ նույնիսկ վարկի մարման ապահովագրման հաշվին:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ երաշխիքի ուժով երաշխիք տված անձը (բանկը, այլ վարկային հաստատությունը կամ ապահովագրական կազմակերպությունը) այլ անձի (պրինցիպալի) խնդրանքով գրավոր պարտավորություն է ստանձնում պրինցիպալի պարտավորող (բենեֆիցիարի) հանդեպ, երաշխիքով ստանձնած պարտավորության պայմաններին համապատասխան, բենեֆիցիարին կարող է վճարել դրամական գումար՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ներկայացնելիս: Երաշխիքն ապահովում է բենեֆիցիարի հանդեպ պրինցիպալի պարտավորության (հիմնական պարտավորության) պատշաճ կատարումը: Երաշխիք տվող անձը պատասխանատվություն է կրում իր կողմից տրված երաշխիքով՝ անկախ հիմնական պարտապանի (պրինցիպալի) պատասխանատվությունից¹:

Հարկ է նշել, որ կազմակերպությունը կարող է մարել իր պարտավորությունները տարբեր ակտիվների՝ դրամական միջոցների, պատրաստի արտադրանքի, ապրանքների, արժեթղթերի իրացման միջոցով: Կազմակերպության պարտավորությունները կատարելու կարողությունը բնութագրվում է նրա վճարունակությամբ: Բանկի առաջ փոխառուի վարկային պարտավորություններն անհրաժեշտաբար պետք է մարվեն դրամական միջոցներով: Նշանակում է վարկավորող բանկի համար ցանկալի է, որ փոխառու կազմակերպությունը լինի և՛ վճարունակ, և՛ վարկունակ: Կարևոր հանգամանք է նաև փոխառուի կողմից դրամական հոսքեր սինթեզելու հնարավորությունը և դրա միջոցով կրեդիտորական պարտավորությունները ծածկելու կարողություն ձեռք բերելը:

Վարկառուի կողմից իր պարտավորությունների պատշաճ կատարման ապահովման համար բանկերը կարող են կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված պարտավորությունների կատարման ապահովման եղանակները՝ տույժ ու տուգանք, գրավ, պարտապանի գույքի պահում, երաշխավորություն, երաշխիք, կանխավճար, օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ եղանակներ: Նշված եղանակներից յուրաքանչյուրի նպատակն է ստիպել վարկառուին, որ վերջինս կատարի իր պարտավորությունները²:

Հաշվի առնելով քննարկված մոտեցումները՝ մեր կարծիքով վարկունակության առավել ընդհանրացված բնորոշումը կարելի է ներկայացնել հետևյալ ձևով. *Վարկունակությունը փոխառուի կարողությունն է վարկավորման կոնկրետ պայմանների դեպքում ամբողջությամբ և վարկային պայմանագրով որոշված ժամկետում կատարել իր պարտքային պարտավորությունները բացառապես դրամական միջոցներով, որոնք սինթեզվում են փոխառուի կողմից իր գործառնական (հիմնական) գործունեության ընթացքում:*

Միջազգային և հայրենական բանկային պրակտիկան հնարավորություն է տալիս տարբերակել հաճախորդի վարկունակության բնութագրման հետևյալ չափանիշերը՝ հաճախորդի բնույթը, միջոցներ փոխառնելու կարողությունը, պարտքի մարման համար ընթացիկ գործունեության ընթացքում միջոցներ աշխատելու կարողությունը, կապիտալը, վարկի ապահովվածությունը, այն պայմանները, որոնցով իրականացվում են վարկային գործարքը, վերահսկողությունը (փոխառու կազմակերպության գործունեության օրենսդրական հիմքերը, վերահսկողական մարմնի և բանկի ստանդարտներին հայցվող վարկի բնույթի համապատասխանությունը):

Հաճախորդի բնույթի տակ հասկացվում է նրա հեղինակությունը, իմիջը, վարկը մարելու պատասխանատվության աստիճանը, վարկի նպատակը ներկայացնելու նրա ազնվությունը, այդ նպատակի համապատասխանությունը բանկի վարկային քաղաքականությանը:

¹ Տե՛ս Նախապետյան Ս., Բանկային օրենսդրություն, Երևան, 2003, էջ. 213, 214:

² ՀՀ քաղաքացիական օրենսգրքը:

Հաճախորդի հեղինակությունը, իմիջը ձևավորվում են նրա գործունեության ամբողջ կենսափուլի ընթացքում, գործունեության ճյուղի միջին ցուցանիշներին նրա ֆինանսատնտեսական ցուցանիշների համապատասխանության, վարկային պատմության, գործարար միջավայրում գործընկերների մոտ հաստատված վստահությանը:

Միջոցներ փոխառնելու կարողությունը նշանակում է հաճախորդի մոտ վարկային հայտ ներկայացնելու, վարկային պայմանագիր կնքելու կամ բանակցություններ վարելու իրավունքի առկայություն:

Փոխառուի վարկունակության հիմնական չափանիշներից մեկը համարվում է պարտքի մարման համար ընթացիկ գործունեության ընթացքում միջոցներ աշխատելու կարողությունը: Ինչպես նշել ենք Ն.Խ.Բունգեի տեսակետը ներկայացնելիս, վարկունակությունը կապվում է կապիտալը անշարժ գույքում ներդնելու աստիճանի հետ: Վերջինս համարվում է արժեզրկման պայմաններում միջոցների արժեզրկման ռիսկից պաշտպանության լավագույն ձևերից մեկը: Հարցը սակայն հանգում է նրան, որ անշարժ գույքից դրամական միջոցների ազատումը պահանջում է որոշակի ժամանակ, և միաժամանակ անշարժ գույքում միջոցներ ներդնելը կապված է ակտիվների արժեզրկման հետ: Դա առավել ակնառու դրսևորում ստացավ 2008 թ. տարեվերջին ամբողջ աշխարհը ցնցած ֆինանսական ճգնաժամի պատճառով: Ուստի, նպատակահարմար է կողմնորոշվել դեպի փոխառուի հաշվեկշռի իրացվելիությունը, գործունեության արդյունավետությունը, նրա դրամական հոսքերը:

Կազմակերպության վարկունակության կարևոր չափանիշ է ընդունվում կապիտալը, որի առումով կարևորվում են գնահատման հետևյալ երկու ուղղությունները.

- կապիտալի բավարարվածությունը, որը վերլուծվում է կանոնադրական կապիտալի նկատմամբ օրենսդրությամբ և ֆինանսական լեերեջի գործակիցներին ներկայացվող պահանջներին համապատասխան:
- Մեփական կապիտալի մասնակցության չափը վարկավորման գործառնությանը, ինչը վկայում է բանկի և փոխառուի միջև ռիսկի բաշխման մասին: Որքան ներդրումային նախագծին բարձր լինի փոխառուի սեփական կապիտալի մասնակցությունը, այնքան նրա կողմից ավելի բարձր կլինի վարկային ռիսկ առաջացնող գործոնները վերահսկելու հետաքրքրվածությունը:

Վարկի ապահովվածության տակ նկատի է առնվում փոխառուի ակտիվների արժեքը և պարտքի մարման կոնկրետ երկրորդային աղբյուրը՝ գրավը, երաշխիքը, երաշխավորությունը, ապահովագրությունը, որոնք նախատեսված են վարկային պայմանագրում: Եթե ակտիվների արժեքի և պարտքային պարտավորությունների հարաբերակցությունը նշանակություն ունի բանկի վարկի մարման համար փոխառուի կողմից սնանկ ճանաչվելու դեպքում, ապա կոնկրետ երկրորդային աղբյուրը երաշխավորում է փոխառուի կողմից իր պարտավորությունների կատարումը ֆինանսական դժվարությունների դեպքում: Գրավի որակը, երաշխիքի, երաշխավորության և ապահովագրության հուսալիությունը կարևոր են հատկապես փոխառուի դրամական անբավարար հոսքերի դեպքում, ինչի արդյունքում առաջանում է նրա հաշվեկշռի իրացվելիության կամ կապիտալով բավարարվածության բարդույթ:

Վարկավորման գործառնության պայմաններին են վերաբերում երկրում, տարածաշրջանում կամ գործունեության ճյուղում ընթացիկ կամ կանխատեսվող տնտեսական իրավիճակը, քաղաքական գործոնները: Այդ պայմանները որոշում են բանկի արտաքին ռիսկի աստիճանը և հաշվի են առնվում փոխառուի դրամական հոսքերի, հաշվեկշռի իրացվելիության, կապիտալով բավարարվածության և մենեջմենթի մակարդակը գնահատելու բանկի ստանդարտներում:

Մեր կողմից նշված վարկունակության վերջին չափանիշը՝ վերահսկողությունը (փոխառու կազմակերպության գործունեության օրենսդրական հիմքերը, վերահսկողական մարմնի և բանկի ստանդարտներին հայցվող վարկի բնույթի համապատասխանությունը), նպատակաուղղում է բանկի մասնագետներին ստանալ հետևյալ հարցերի պատասխանը.

- փոխառուի գործունեության և վարկավորման միջոցառման իրականացման համար առկա է օրենսդրական և նորմատիվային հիմքեր,
- ինչպես է ազդում փոխառուի գործունեության արդյունքների վրա օրենսդրության սպասվող փոփոխությունը, օրինակ մաքսային և հարկային ոլորտներում իրականացվող բարեփոխումները,
- ըրքանով են փոխառուի և վարկի վերաբերյալ տեղեկությունները, որոնք պարունակվում են վարկային հայտում, համապատասխանում բանկի ստանդարտներին, ինչն ամրագրված է վարկային քաղաքականության փաստաթղթում:

Վարկունակության ներկայացված չափանիշերը որոշում են դրա գնահատման ձևերի բովանդակությունը: Դրանցից նշենք հետևյալները.

- գործարար ռիսկի գնահատումը,
- մենեջմենտի գնահատումը,
- փոխառու կազմակերպության ֆինանսական կայունության գնահատումը՝ ըստ ֆինանսական գործակիցների, ըստ դրամական հոսքերի վերլուծության,
- հաճախորդի վերաբերյալ այլ տեղեկատվության հավաքագրումը,
- տեղում հաճախորդի գործունեության դիտարկումը:

Չնայած գնահատման չափանիշերի և ձևերի որոշակի առումով առկա միասնությանը՝ իրավաբանական և ֆիզիկական անձանց, խոշոր, միջին և մանր հաճախորդների վարկունակության վերլուծության դեպքում գոյություն ունի յուրահատուկ մոտեցում: Տրամադրելով վարկեր՝ բանկը իր կողմից մշակված մոտեցումներով, հետևականորեն գնահատում է յուրաքանչյուր փոխառուի վարկունակությունը:

Ուսումնասիրելով վարկունակության գնահատման առկա մեթոդները, կարծում ենք, որ միշտ այս գործընթացում առկա կլինեն բացեր, որոնք հարկ կլինի լրացնել նոր, այլընտրանքային բնույթի գնահատման մոտեցումներով: Կազմակերպությունների ֆինանսական վիճակի գնահատման բազմաթիվ ձևերից առավել լայն տարածում է ստացել ֆինանսական գործակիցների վրա հիմնված մեթոդիկան: Ֆինանսական դրության բաղադրիչների միավորման և դրանց վերաբերող ցուցանիշների համակարգման համար օգտագործվում է ռեյտինգային գնահատումը: Այն հնարավորություն է տալիս որոշել կազմակերպության ֆինանսական վիճակը համակարգված ցուցանիշի՝ ռեյտինգի օգնությամբ, որն արտացոլվում է բալերի տեսքով, և դրանց շնորհիվ փոխառուին տրվում է վարկունակության համապատասխան դաս:

Ռեյտինգային գնահատման մեթոդը օգտագործվում է բոլոր բանկերի կողմից՝ շնորհիվ դրա հարմարավետության և համեմատաբար պարզության, բայց ցուցանիշների ընտրության մեթոդը գնահատման գործընթացում վարկատուների մոտ խիստ տարբերվում է:

Ռեյտինգային գնահատման մեթոդիկան պարունակում է գնահատող ցուցանիշների համակարգի մշակման, այդ ցուցանիշների սահմանային միջակայքերի որոշման, դրանց համապատասխան վարկունակության գումարային գնահատականների հիման վրա փոխառու կազմակերպությունների դասակարգման գործընթացները:

Հայրենական բանկերի պրակտիկայում վարկունակության գնահատումը հաճախ հանգում է փոխառուի հուսալիության դասի որոշմանը, որը ձևավորվում է ինքնուրույն բլոկների ազդեցությամբ: Դրանք ներառում են հաճախորդի ընդհանուր բնութագիրը, նրա վարկային պատությունը, ֆինանսական վիճակը, վարկի ապահովվածությունը, վարկավորման օբյեկտի բնութագիրը: Յուրաքանչյուր խումբ ռեյտինգային գնահատականում ունի իր կշիռը: Յուրաքանչյուր խմբում տարանջատվում են սահմանաչափեր, որոնք հնարավոր է որոշել վերը ներկայացված մեթոդիկայի հարցերին տրվող պատասխանների հիման վրա: Ստացված բալերը գումարելով որոշվում է փոխառու կազմակերպության հուսալիության դասը:

Յուրաքանչյուր բանկ վարկունակության գնահատման մեթոդիկան մշակում է ինքնուրույն, ուստի ինչպես ընդհանուր ռեյտինգային գնահատման մոտեցման, այնպես էլ յուրաքանչյուր վերլուծական բլոկում ներառված չափանիշների առումով առկա են էական տարբերություններ: Բնականաբար, դա չի կարող իր ազդեցությունը չունենալ վարկային շուկայի ընդհանուր վիճակի և մասնավորապես փոքր և միջին բիզնեսի վարկավորման գործընթացի վրա: Միաժամանակ ոչ ճիշտ գնահատումները հանգեցնում են չվերադարձվող և ժամկետանց վարկերի գոյացմանը՝ վատթարացնելով բանկի վարկային պորտֆելի որակը: Դրա հետևանքով անվստահություն է ձևավորվում հավանական փոխառու կազմակերպությունների նկատմամբ, և արդյունքում վարկային շուկայում հաստատվում է անկայուն վիճակ:

Հարկ է նկատել, որ նշանակալի տարբերություններ են առկա փոխառուի ֆինանսական վիճակը և գործունեության արդյունավետությունը գնահատող մեթոդիկաներում: Ակնհայտ է, որ ինչքան մեծ թվով ցուցանիշներ հաշվարկվեն, այնքան խորը բնույթ կկրի կազմակերպության ֆինանսական վիճակի վերլուծությունը: Սակայն անհրաժեշտ ենք համարում նշել, որ մյուս կողմից էլ ցուցանիշների թվաքանակի ավելացումը, որոնց մեծ մասը փոխկապակցված են և գտնվում են նկատելի դրական կոռելացիոն կապի մեջ, վերլուծության խնդիրը և իրականացումը նշանակալիորեն դժվարանում է:

Բացի նշվածից, վարկունակության վերլուծության-գնահատման դեպքում գործնականում տարբեր կազմակերպությունների համար միշտ օգտագործվում են գնահատող ցուցանիշների նույնաբնույթ նշանակություններ, ինչը հաճախ գործընթացը տնտեսական տեսանկյունից դարձնում է նվազ օգտակար: Ուստի, կարծում ենք, որ հատկապես փոքր և միջին առևտրային կազմակերպությունների համար անհրաժեշտ է ոչ միայն ընտրել նպատակահարմար ցուցանիշների համախմբերը, այլև ճյուղային առանձնահատկություններից ելնելով՝ որոշել գնահատող ցուցանիշների առավել ճշգրիտ նորմատիվային նշանակությունները:

Մեր կարծիքով վարկունակությունը գնահատելիս ֆինանսական վիճակի վերաբերյալ իրատեսական պատկերացում ձևավորելու համար պարտադիր պետք է ներառվեն ցուցանիշների հետևյալ խմբերը.

1. հաշվեկշռի իրացվելիությունը բնութագրող,
2. ֆինանսական կայունության,
3. միջոցների շրջանառելիության,
4. արդյունավետության:

Նշված խմբերում ներառվող ցուցանիշների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու համար կարևորվում են հետևյալ աղբյուրները.

- հաճախորդից անմիջականորեն ստացվող նյութերը՝ ֆինանսական հաշվետվությունների փաթեթը,
- բանկի արխիվում հաճախորդի վերաբերյալ առկա նյութերը,
- հաճախորդի հետ գործարար կապեր ունեցող անձանցից ստացվող տեղեկատվությունը,
- մասնավոր և պետական հաստատություններից ստացվող հաշվետվությունները և նյութերը:

Զննարկվածի համատեքստում հանգում ենք այն եզրակացության, որ 2008 թ. տարեվերջյան համաշխարհային ֆինանսական ճգնաժամի պատճառով վարկավորման պայմանների խստացումը պահանջում է նորովի մոտեցում ցուցաբերել հաճախորդների վարկունակության գնահատման գործընթացում: Այսուհետ բանկ-փոխառու կազմակերպություն փոխհարաբերությունները պետք է ոչ միայն նպատակաուղղված լինեն վարկի վերադարձմանը, ռիսկերի նվազմանը, այլև խորհրդատվությամբ նպաստեն փոխառուի գործունեության արդյունավետության բարձրացմանը: Ուստի, այլընտրանքային բնույթ ունեցող գործոնային գնահատման, խորհրդատվական համակարգի մշակումը ներկա պայմաններում մեր կողմից նույնպես դասվում է հրատապ և լուծում պահանջող կարևորագույն հիմնահարց: